ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. **№_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՐՊԵՍ
ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի գործադիր տնօրենի 2024 թվականի մարտի 20-ի գրությունը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող Անտառային փողոցի հ.1 (0.04հա հողամաս), Անտառային փողոցի հ.1ա (0.1953հա հողամաս), Անտառային փողոցի հ.13 (0.0313հա հողամաս), Անտառային փողոցի հ.139 (0.1հա հողամաս), Սարմենի փողոցի հ.19 (0.0563հա հողամաս), Ջրաշատ փողոցի հ.27 (0.0420հա հողամաս, 164.6քմ շինություն) և Սարմենի փողոցի հ.29 (0.0456հա հողամաս) հասցեներում գտնվող անշարժ գույքերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի գործադիր տնօրենը Երևանի քաղաքապետին հասցեագրված 2024 թվականի մարտի 20-ի գրությամբ հայտնել է, որ հիմնադրամը պատրաստակամություն է հայտնում Անտառային փողոցի հ.1 (0.04հա հողամաս), Անտառային փողոցի հ.1ա (0.1953հա հողամաս), Անտառային փողոցի հ.13 (0.0313հա հողամաս), Անտառային փողոցի հ.139 (0.1հա հողամաս), Սարմենի փողոցի հ.19 (0.0563հա հողամաս), Ջրաշատ փողոցի հ.27 (0.0420հա հողամաս, 164.6քմ շինություն) և Սարմենի փողոցի հ.29 (0.0456հա հողամաս) հասցեներում գտնվող անշարժ գույքերը նվիրաբերել Երևան համայնքին՝ պայմանով որ նշված անշարժ գույքերում կառուցապատման աշխատանքներ չեն կատարվելու, այլ անձանց չեն փոխանցվելու և օգտագործվելու են միայն բարեկարգման նպատակով:

Քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված: Հաշվի առնելով «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի գործադիր տնօրենի գրությունն անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին նվիրվող գույքերը:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Անշարժ գույքերը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ